| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 3 | Հուլիս | 2019 թ. |
| [4] Մատուցման ամսաթիվը | | |
| 3 | Հուլիս | 2019 թ. |

# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 2981855105 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

**Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի**

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 | 2 | 6 | 3 | 6 | 7 | 8 | 1 | |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | | | | |

| | |
|---|---|
| [10] Անվանումը | «ԱՎ ԷՔՍՊԵՐՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [11] Բանկային տվյալները | Արդշինբանկ N 2470103343210000 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ԹԻՎ 48 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

**Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի**

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 | 2 | 6 | 3 | 1 | 2 | 6 | 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | | | |

| | | |
|---|---|---|
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ | |
| [17] Բանկային տվյալները | | N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 | |
| [19] Լրացուցիչ տվյալներ | | |
| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | |
| | Լիազորագիր — Համար | |
| | Լիազորագիր — Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ծավալաչափային բջջերը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Թիվ 18200518 քրեական գործով դատահաշվապահական և դատատնտեսագիտական համալիր | հատ | 1 | 410000 | | 410000 |
| Ընդամենը | | | | | | 410000 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GRIGORYAN NAREK 1514930757

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրություն, անուն, ազգանուն)

03/07/2019 20:35:01

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## Դատատնտեսագիտական և դատահաշվապահական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

**10 հուլիսի 2018թ.** **ք. Գյումրի**

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, երկրորդ դասի խորհրդական՝ Վ.Ղ.Մելքոնյանս, քննարկելով վարույթիս թիվ 18200518 քրեական գործի նյութերը.

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի ապրիլի 20-ին Գյումրի քաղաքի բնակչուհի Նարինե Ռոբերտի Հակոբյանը դիմում է հասցեագրել Շիրակի մարզի դատախազին, որում առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող տեղեկություններ է ներկայացրել «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱ կազմակերպությունում կատարվող չարաշահումների և յուրացումների վերաբերյալ:

2018 թվականի ապրիլի 25-ին ներկայացված հաղորդումն ուղարկվել է ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Մուշի բաժին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութեր նախապատրաստելու նպատակով:

Նյութերի նախապատրաստման ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել առ այն, որ «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱ կազմակերպության տնօրենը, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հիմնադրած պետական ուսումնական հաստատությունում իրականացնելով կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ և հանդիսանալով պաշտոնատար անձ, իր լիազորությունների շրջանում օժտված լինելով առանց լիազորագրի հանդես գալու ուսումնական հաստատության անունից, ներկայացնելու նրա շահերը, տնօրինելու ուսումնարանի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, պարտավորված լինելով ապահովելու բյուջետային հատկացումների, հիմնադրի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, սահմանված կարգով պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի վարումը և պահպանումը, ապահովելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքը, մարզպետի հաստատմանը ներկայացնելու ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կրելով պատասխանատվություն օրենքների, հիմնադրի, նախարարության, լիազորված պետական մարմնի և խորհրդի որոշումների, այլ իրավական ակտերի և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, շահադիտական դրդումներով, խախտելով ՀՀ կառավարության 25.08.2005 թվականի «ՀՀ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» թիվ 1365-Ն որոշման պահանջները, 2014-2018 թվականների ուսումնական տարիների համար «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱ կազմակերպության կարիքների համար մրցույթում հաղթող ճանաչված

տնտեսվարողների՝ անհատ ձեռնարկատերեր Նաիրա Անտիկյանի և Հասմիկ Սիմոնյանի հետ տարբեր ժամանակահատվածներում կնքել է ընդհանուր շուրջ 15.481.173 (տասնհինգ միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ գումարի սննդամթերքի մատակարարման պայմանագրեր, որոնցով վերջինները պարտավորվել են պայմանագրերին կից տեխնիկական բնութագրերին համաձայն՝ սննդի ծանրոցներ մատակարարել դպրոց, այնինչ տնօրենը, նպատակ ունենալով մաս-մաս հափշտակել պետական բյուջեից դպրոցի ներառական կրթության ծրագրում սովորող երեխաների սննդի համար հատկացված առանձնապես խոշոր չափերի հասնող գումարները, նախնական համաձայնության գալով հիշյալ տնտեսվարող սուբյեկտների հետ, երկուստեք կազմել և հաստատել են բովանդակությամբ կեղծ հանձման-ընդունման արձանագրություններ, պայմանագրերի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտեր, որոնցում ակնհայտ կեղծ տեղեկություններ են ներառել ինչպես ստացված ծանրոցների քանակի, այնպես էլ այդ ծանրոցներում սննդամթերքի տեսակի, չափի և սննդի օգտագործման հետ կապված պարագաների վերաբերյալ, ինչի արդյունքում վերը հիշատակված ժամանակահատվածում 697-780 ՀՀ դրամ արժողությամբ սննդի ծանրոցների փոխարեն փաստացի դպրոց մատակարարվել և երեխաներին բաշխվել է 150-200 ՀՀ դրամ արժողությամբ սննդի ծանրոցներ, իսկ պայմանագրով նախատեսված գումարի մնացած մասը, օգտագործելով իրենց անձնական կարիքների համար, խաբեության եղանակով հափշտակել են:

Փաստի առթիվ 05.05.2018թ-ին Շիրակի մարզի դատախազի տեղակալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 18200518 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Վերոգրյալ հանցավոր արարքները մեղավորությամբ կատարելու համար, նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ որոշում է կայացվել Արսեն Արտավազդի Ալեքսանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 314-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, այն բանի համար, որ նա հանդիսանալով «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հիմնադրած պետական ուսումնական հաստատությունում իրականացնելով կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ և հանդիսանալով պաշտոնատար անձ, իր լիազորությունների շրջանում օժտված լինելով առանց լիազորագրի հանդես գալու ուսումնական հաստատության անունից, ներկայացնելու նրա շահերը, տնօրինելու ուսումնարանի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, պարտավորված լինելով ապահովելու բյուջետային հատկացումների, հիմնադրի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, սահմանված կարգով պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի վարումը և պահպանումը, ապահովելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքը, մարզպետի հաստատմանը ներկայացնելու ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կրելով պատասխանատվություն օրենքների, հիմնադրի, նախարարության, լիազորված պետական մարմնի և խորհրդի որոշումների, այլ իրավական ակտերի և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, շահադիտական դրդումներով, խախտելով ՀՀ կառավարության 25.08.2005 թվականի «ՀՀ հատուկ հանրակրթական

ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» թիվ 1365-Ն որոշման պահանջները, 2014 թվականի սեպտեմբերի 01-ից մինչ 2018 թվականի ապրիլի 04-ն ընկած ժամանակահատվածում «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱ կազմակերպության կարիքների համար մրցույթում հաղթող ճանաչված տնտեսվարողների՝ անհատ ձեռնարկատերեր Նաիրա Անտիկյանի և Հասմիկ Սիմոնյանի հետ տարբեր ժամանակահատվածներում կնքել է ընդհանուր շուրջ 15.481.173 (տասնհինգ միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ գումարի սննդամթերքի մատակարարման պայմանագրեր, որոնցով վերջինները պարտավորվել են պայմանագրերին կից տեխնիկական բնութագրերին համաձայն՝ սննդի ծանրոցներ մատակարարել դպրոց, այնինչ նախնական հանցավոր համաձայնության գալով հիշյալ տնտեսվարող սուբյեկտների հետ, վերոհիշյալ ժամանակահատվածում պարբերաբար երկուստեք կազմել և հաստատել են բովանդակությամբ կեղծ հանձման-ընդունման արձանագրություններ, պայմանագրերի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտեր, որոնցում ակնհայտ կեղծ տեղեկություններ են ներառել ինչպես ստացված ծանրոցների քանակի, այնպես էլ այդ ծանրոցներում սննդամթերքի տեսակի, չափի և սննդի օգտագործման հետ կապված պարագաների վերաբերյալ, ինչի արդյունքում վերը հիշատակված ժամանակահատվածում 697-780 ՀՀ դրամ արժողությամբ սննդի ծանրոցների փոխարեն փաստացի դպրոց մատակարարվել և երեխաներին բաշխվել է մոտ 200 ՀՀ դրամ արժողությամբ սննդի ծանրոցներ, իսկ պայմանագրով նախատեսված գումարի մնացած մասը՝ առանձնապես խոշոր չափերի հասնող 11.315.949 ՀՀ դրամը, անհատ ձեռնարկատերեր Նաիրա Անտիկյանի և Հասմիկ Սիմոնյանի հետ, օգտագործելով իրենց անձնական կարիքների համար, խաբեության եղանակով հափշտակել են:

15.06.2017թ-ին մեղադրյալ Արսեն Ալեքսանյանն ինքնախոստովանական ցուցմունք է տվել այն մասին, որ 2014թ-ի ապրիլի 01-ից մինչ 2018թ-ի ապրիլի 04-ն ընկած ժամանակահատվածում, նախապես պայմանավորվածություն է ձեռք բերել մատակարարների հետ, այն մասին, որ ներառական կրթության ծրագրում ընդգրկված աշակերտների համար դպրոց մատակարարվի միայն յոգուրտ կամ բուլկի, կամ փոքրիկ հաց և թթվասեր, կամ փոքրիկ հաց և պանրիկ, իսկ մատակարարների հաշվեհամարին ընդհանուր գումարը փոխանցելուց հետո, գումարի տասը տոկոսը և փաստացի մատակարարած սննդի արժեքը մնա մատակարարներին, իսկ ավելացած գումարը վերադարձնեն իրեն: Հիշյալ ժամանակահատվածում գործել են պայմանավորվածության համաձայն: Ինչպես նաև այն ժամանակահատվածում, երբ ներառական կրթության ծրագրում ընդգրկված երեխաների ծնողներին գումարները վճարվել են կանխիկ, իր հանձնարարականով նրանց չի տրամադրվել ողջ գումարը, այլ տրամադրվել է 1800-ական կամ 2000-ական դրամ գումարներ:

Մեղադրանքներ են առաջադրվել նաև Նարինե և Արտյոմ Անտիկյաններին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-314-րդ հոդվածի 1-ին մասով:

Նկատի ունենալով, որ քրեական գործով կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզելու նպատակով անհրաժեշտ են դատական տնտեսագիտության և հաշվապահության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածով, 243-246-րդ հոդվածներով, 248-րդ հոդվածով,

# Ո Ր Ո Շ Ե Տ Ի

1.Թիվ 18200518 քրեական գործով նշանակել դատատնտեսագիտական և դատահաշվապահական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Հույս և օրենք» ՍՊ ընկերության փորձագետներին՝ նրանց նախազգուշացնելով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Փորձագետներին տրամադրել քրեական գործը, առգրաված նյութերը, ինչպես նաև գործով արդեն իսկ նշանակված դատաապրանքագիտական փորձաքննության եզրակացությունը՝ այն ստանալուց հետո:

3. **Փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը՝**

ա)2014թ-ի սեպտեմբերից մինչ 2018թ-ի ապրիլի 4-ն ընկած ժամանակահատվածում, որքա՞ն շահառու երեխաներ են ընդգրկվել «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներառական կրթության ծրագրում, այդ կապակցությամբ դպրոցը, որքա՞ն ֆինանսավորում է ստացել և ինչպե՞ս է տնօրինել այդ ֆինանսական միջոցները:

բ)դպրոցը ներառական ծրագրում ընդգրված երեխաներին, ո՞ր ժամանակահատվածում և ի՞նչ սնունդ է հատկացրել, ովքե՞ր են հանդիսացել սննդի մատակարարներ, արդյոք մատակարարի վերաբերյալ անցկացրած մրցույթները կատարվե՞լ են տվյալ ժամանակահատվածում գործող օրենսդրության պահանջների համապատասխան, թե՞ ոչ, եթե ոչ, ապա ի՞նչ խախտումներ են թույլ տրվել և ու՞մ կողմից:

գ)այն պայմաններում, երբ 2014թ-ի սեպտեմբերից մինչ 2018թ-ի ապրիլի 4-ն ընկած ժամանակահատվածում շահառու երեխաներին տրամադրվել են փաստացի ավելի ցածր արժեքով սննդի փաթեթներ /յոգուրտ և բուլկի.../, որքա՞ն է կազմել պակաս տրամադրված սննդի արժեքը՝ խարդախությամբ հափշտակված գումարի չափը:

դ) 2014թ-ի սեպտեմբերից մինչ 2018թ-ի ապրիլի 4-ն ընկած ժամանակահատվածում սննդի փաթեթների ձեռք բերման վերաբերյալ ֆինանսական փաստաթղթերում առկա տվյալները համապատասխանու՞մ են մատակարարի հաշվին փոխանցած գումարներին, թե՞ առկա են անճշտություններ, եթե այո, ապա որո՞նք են դրանք:

ե) 2014թ-ի սեպտեմբերից մինչ 2018թ-ի ապրիլի 4-ն ընկած ժամանակահատվածում ներառական կրթությունում ընդգրկված շահառու երեխաների ծնողներին ճանապարհածախսի գումարները կոնկրետ ո՞ր ժամանակահատվածում են տրամադրվել կանխիկ ճանապարհով, որքա՞ն է կազմել կանխիկ տրամադրված ընդհանուր գումարը, և եթե ցուցակներում երեխայի անվան դիմաց նշված գումարի փոխարեն ծնողին տրամադրվել է 1800-2000 դրամ գումար, որքա՞ն է կազմել պակաս տրամադրված, խարդախությամբ հափշտակված գումարի չափը:

զ)յուրաքանչյուր օր երեխային տրամադրված սննդի և ճանապարհածախսի գումարների միջև տարբերություններ առկա՞ են, թե՞ ոչ, /օրինակ՝ երեխան սնունդ ստացել, սակայն ճանապարհածախս չի ստացել/, եթե այո, ապա ըստ ամիսների, որքա՞ն են կազմում այդ տարբերությունները ներառական կրթության ծրագրում ընդգրկված աշակերտներից յուրաքանչյուրի վերաբերյալ:

է) ներառական կրթության շրջանակներում ուղևորափոխադրման պայմանագրեր կնքվե՞լ են, թե՞ ոչ, եթե այո, ապա դրանք համապատասխանե՞լ են «Գնումների մասին» օրենքի պահանջներին, թե՞ ոչ, եթե ոչ, ապա ի՞նչ խախտումներ են թույլ տրվել, այդ պատճառով անձանց, կազմակերպություններին, պետությանը վնաս պատճառվե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչքա՞ն:

ը) ուղևորափոխադրման վերաբերյալ պայմանագրերում ծառայությունների մատուցման արժեքն օբյեկտիվորեն հաշվարկվե՞լ է, թե՞ ոչ, եթե ոչ, ապա այդ

ժամանակահատվածի համար, որքա՞ն է կազմել ծառայության օբյեկտիվ արժեքը և որքա՞ն ավել գումար է նշվել պայմանագրում:

թ) «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար Աստղիկ Տոնոյանին 2016-2017թթ համար արձակուրդ ձևակերպվե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա հասանելիք արձակուրդային գումարը տրամադրվե՞լ է սահմանված չափով, թե՞ ոչ, եթե ոչ, ապա ի՞նչ անճշտություններ են առկա և ու՞մ կողմից են դրանք թույլ տրվել:

ժ)2014-2018թ.թ. ընկած ժամանակահատվածում, որքա՞ն է կազմել «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի արհմիության յուրաքանչյուր տարվա գումարը և ինչպե՞ս է այն ծախսվել, այդ ծախսերի կապակցությամբ հաշվապահական փաստաթղթերում անճշտություններ կա՞ն, թե՞ ոչ, եթե այո, ապա, ինչպիսի՞ և ու՞մ կողմից են դրանք թույլ տրվել:

ի) «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Գայանե Տոնոյանին 2016-2017թ.թ. ընթացքում արձակուրդ տրամադրվե՞լ է, թե՞ ոչ:

լ)2014-2018թ.թ. ընթացքում «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում ու՞մ է հանձնարարված եղել դաստիարակի պարտականությունները և որքան է կազմել որպես դաստիարակ նրանց աշխատավարձի գումարները:

խ) «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին ուսուցչուհի Սիլվա Այվազյանին վճարվե՞լ է վերջնահաշվարկ, թե՞ ոչ, եթե այո, ապա հաշվարկը ճիշտ կատարվե՞լ է, թե՞ ոչ, եթե ոչ, ապա այդ անճշտությունն ու՞մ կողմից է թույլ տրվել:

ծ) «Գյումրու թիվ 40 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում ներդրված «Դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր ամիս, որքա՞ն արժողությամբ սնունդ է ձեռք բերվել և այդ կապակցությամբ հաշվապահական փաստաթղթերում անճշտություններ առկա են, թե՞ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞:

3.Եթե փորձաքննության ընթացքում առաջանան այլ հարցեր, որոնք կարող են օգտակար լինել քննության համար և որոնց պատասխանները մտնում են փորձագետի իրավասության մեջ, խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

**ՀԿԳ քննիչ՝** **Վ.Ղ.Մելքոնյան**